Ընթացակարգ

186/86-Լ 29 սեպտեմբեր, 2023

Ընդունող մարմին **Ռեկտոր**

Կարգավիճակ **Գործում է**

ՄԻՋՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը հարակից մասնագիտական ոլորտի, միևնույն ուսումնական տևողություն ունեցող կրթական ծրագրերում սովորող երկու ուսանողների կողմից երկու գիտական ղեկավարների ընդհանուր ղեկավարությամբ իրականացվող հետազոտական աշխատանք է:

1.2. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը հետազոտական և կիրառական նշանակություն ունեցող աշխատանք է, որն արտացոլում է հարակից մասնագիտական ոլորտներում ուսանողների ձեռք բերած գիտելիքները և կարողությունները կիրառելու ևս միջմասնագիտական ինքնուրույն հետազոտություն կատարելու հմտությունները:

2. ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2.1. Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի պատրաստումն պաշտպանությունն իրականացվում է համաձայն «Երևանի պետական համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման» կարգի, ինչպես նաև սույն ընթացակարգի 2.2., 2.3., 2.4., 2.5. կետերի:

2.2. Միջմասնագիտական մագիստրոսական թեզի թեման հաստատվում է տվյալ ծրագրերն իրականացնող ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում և ներկայացվում է Ուսումնամեթոդական վարչություն՝ հրամանագրման:

2.3. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը նախքան նախապաշտպանությունը անցնում է փորձաքննություն միջամբիոնային

հանձնաժողովում, որի հիման վրա հանձնաժողովը տրամադրում է եզրակացություն:

2.4. Միջմասնագիտական մագիստրոսական թեզի նախապաշտպանությունը և հրապարակային պաշտպանությունն իրականացվում է երկու տարբեր ուսումնական ստորաբաժանումների մասնագիտական հանձնաժողովների նիստերում: Նախապաշտպանության ժամանակ յուրաքանչյուր հանձաժողովին ներկայացվում է միջամբիոնային հանձնախմբի եզրակացությունը և երկու գիտական ղեկավարների կարծիքները:

2.5. Միջմասնագիտական մագիստրոսական թեզը ենթակա է արտաքին գրախոսման: Նախապաշտպանությունից հետո ուսումնական ստորաբաժանումները միջմասնագիտական թեզը ներկայացնում են արտաքին գրախոսման՝ կցելով միջամբիոնային հանձնաժողովի եզրակացությունը, նախապաշտպանություններից հետո ՝ համապատասխան հանձնաժողովների կողմից տրված ուղեկցող նամակը՝ թեզի միջմասնագիտական կարգավիճակ ունենալու մասին, և երկու գիտական ղեկավարների կարծիքները:

Սույն փաստաթուղթը բեռնվել է ԵՊՀ փաստաթղթերի պաշտոնական հրապարակման կայքից
https://www.ysu.am/documents-categories

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am